ամենևին չի հեռանայ իւր սիրելի հայրենի աշխարհից։ Լի հաւատով, հաստատ յուսով և բուռն սիրով նա սիրում ու պաշտում է իւր ս. կրօնքն ու մայրենի հնադարեան սուրբ եկեղեցին, որոնց համար նա պատրաստ է զոհել իւր գլուխը։ Նահապետական պարզ և մաքուր սրտանց նա սիրում է իւր անմեղ հաւատարիմ ամուսնուն և իւր երեխաներին, թէև մի չնչին բանի համար շատ անգամ անողորմաբար հայհոյում ու ծեծում է իւր դժբախտ ամուսնուն։ Բայց այսուամենայնիւ Ուտիացի կնոջ անվերջ համբերութիւնն ու ամուսնական հաւատարմութիւնը, նրա մաքուր վարքն ու բարքը օրինակելի կարող է համարուել Կովկասեան ամեն մի գիւղացի Հայ կնոջ համար։ Ուտիացի կնոջ վարք ու բարքի մասին եթէ մի փոքրիկ կասկած յայտնուի, կամ շշուկ լսուի, առանց ստուգելու սուտն ու զորդը, այդպիսի դժբախտ կինը չարաչար կպատժուի մահով։ Աստուած չանէ, եթէ Ուտիացի մի կին համարձակուի սիրային յարաբերութիւն հաստատել ուրիշի հետ, այդպիսի վատաբարոյ կինը խկոյն սրախողխող կլինի իւր ամուսնու և կամ նոյն իսկ իւր հարազատ եղբօր ձեռքով։ Այս անողոք խստութեան պատճառով ընտանեկան կեանքը շատ մաքուր և անբիծ պահպանուած է այդ կողմերում։ Ուտիացի Հայը օժտուած է հետևեալ ընտիր յատկութիւններով՝ համարձակ, ճշմարտախօս, անվեհեր, պատուի նախանձախնդիր, տոկուն, չարքաշ, համբերող և անվերջ աշխատասէր է նա և իւր ուշքն ու միտքը լարած՝ նուիրուած